

**Լիաննա Սարգսյան**  
**ԵՊՀ Եվրոպական և միջազգային**  
**իրավունքի ամբիոնի դասախոս**

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՑԵՐԸ**

Միջազգային համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում տարվում է մի շարք միջոցառումների իրականացմամբ, որոնց մեջ իր ուրույն դերն ու նշանակությունն ունի քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտը: Հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցությունը և դրա իրավական կարգավորումը սկիզբ են առնում հնագույն քաղաքակրթությունից, երբ դեռ չկային միջազգային իրավունքի նորմերի կարգավորված համակարգ և մշկված գաղափարախոսություն<sup>1</sup>: Ըստ էության միջազգային համագործակցության ձևավորումը սկիզբ է առնում այն ժամանակաշրջանից, երբ պետականության գաղափարի հետ միասին պետություններում հաստատվում է իրենց տարածքային գերակայության գաղափարը, ըստ որի յուրաքանչյուր պետության տարածքում պետք է լինի մեկ միասնական և ինքնուրույն պատասխանատվության ենթարկող իշխանություն, և որ այդ տարածքում գտնվող բոլոր անձինք պարտավոր են ենթարկվել դրան:

Քրեական գործերով իրավական օգնության մասին խոսելիս հարկ ենք համարում նշել, թե ինչ է նշանակում այդ ինստիտուտը, և թե ինչպիսի կարծիքներ են արտահայտվել իրավաբանական գրականության մեջ դրա վերաբերյալ: Իրավաբանական գրականության մեջ **«իրավական օգնություն»** հասկացության վերաբերյալ կան մի շարք տեսակետներ և ձևակերպումներ: Օրինակ՝ եթե հունգարացի իրավաբան Ֆ. Մարկուշը այս ինստիտուտը բնութագրում է որպես «օգնություն, որը կոնկրետ քրեական գործի քննության ընթացքում ցուցաբերվում է մի պետության մարմինների կողմից այլ պետության մարմիններին և կարող է կատարվել գործի քննության համար անհրաժեշտ կոնկրետ դատավարական գործողություններ կատարելու

---

<sup>1</sup> Տե՛ս Bedi S.D., Extradition in International Law and practice. Rotterdam. 1966, էջ 16:

կամ փաստաթղթեր փոխանցելու ձևով»<sup>1</sup>, ապա ֆրանսիացի գիտնական Կ. Լոմբուան դատական փոխօգնությունը ձևակերպում է որպես «որոշակի միջոցառումների համակցություն, որոնց միջոցով մի պետությունը մեկ այլ պետությանն է տրամադրում իր հասարակական ծառայությունների կամ դատական ինստիտուտների օգնությունը՝ հանցագործության քննության, դատական քննության կամ հանցագործին պատժելու նպատակով»<sup>2</sup>: Քրեական գործերով իրավական օգնությունը ռուս գիտնական Վ. Շուպիլովը այն բնութագրում է որպես «պայմանավորվող պետություններից մեկի իրավասու մարմինների կողմից իրականացվող գործողություններ, որոնք անհրաժեշտ են քրեական գործի քննության, դատական քննության կամ էլ քրեական գործով նշանակված պատիժն ի կատար ածելու համար»<sup>3</sup>, իսկ, օրինակ, 1959 թ. Ստրասբուրգում կնքված Քրեական գործերով իրավական օգնության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետում ամրագրված է, որ «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան միմյանց տրամադրել անենալայն իրավական օգնություն այն հանցագործությունների դեմ քրեական հետապնդում իրականացնելիս, որոնք իրավական օգնության խնդրանքը տալու ժամանակ մտնում են հայցող կողմից դատական մարմինների իրավագործության սահմանների մեջ»<sup>4</sup>:

Իհարկե, վերը նշված հասկացություններից յուրաքանչյուրն արտահայտում է իրավական օգնության ինստիտուտի այս կամ այն առավել բնորոշ հատկանիշները: Առանձնացնելով դրանցից ամենակարևորները և տրամաբանորեն միավորելով դրանք՝ կարելի է եզրակացնել, որ քրեական գործերով իրավական օգնությունն իրենից ներկայացնում է մի պետության կողմից (պայմանագրի մասնակից մյուս պետության համապատասխան խնդրանքի հիման վրա) քրեադատավարական բնույթի որոշակի գործողությունների կատարում (վկաների հարցաքննություն, փորձաքննության անցկացում, դատական փաստաթղթերի հանձնում և այլն), որոնք անհրաժեշտ են հայ-

<sup>1</sup> Стен Шупилов В. П., Международная правовая помощь по уголовным делам // Сов. государство и право, М., 1974, N 3, էջ 86:

<sup>2</sup> Стен Шупилов В. П., նշվ. աշխ., էջ 86:

<sup>3</sup> Стен Шупилов В. П., նույն տեղում, էջ 87:

<sup>4</sup> Стен Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью, Сост. Москалькова Т. Н. и др., М., 1998:

ցող երկրում արդարադատություն իրականացնելու համար: Այն կարող է ընդգրկել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հանցագործություն կատարած անձանց հանձնումը, խուզարկությունը, մատնահետքերի փոխանցումը, տեղեկատվության փոխանակումը և այլն: Քրեական գործերով իրավական օգնության հարցերի շրջանակը, որն առաջադրված է իրավապահ մարմինների կողմից, բավականին լայն է:

Քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի անբաժանելի մասն է կազմում էքստրադիցիայի (հանձնման) ինստիտուտի իրավական հիմքի ձևավորումը՝ գործում են քրեական գործերով հանցագործերի հանձնման և իրավական օգնություն ցուցաբերելու մասին մի շարք կանոնակարգված միջազգային կոնվենցիաներ և պայմանագրեր<sup>1</sup>: Այն քրեական գործերով իրավական օգնության առաջին և գերակայող նշանակություն ունեցող ինստիտուտ է: Պետությունների համագործակցության ողջ պատմության ընթացքում հանձնումն իրենից ներկայացնում էր մի համակարգ, որը բաղկացած է մի շարք գործընթացներից, որոնց միջոցով մի պետության թագավորը մեկ այլ պետության թագավորին էր հանձնում այն անձին, որը թաքնվում է արդարադատությունից և հետապնդվում էր որպես հանցագործ կամ որպես մեղադրյալ: «Հանձնումը,- ինչպես նշում է,- Ա.Ի. Բաստիրկինը,- իրավական օգնության հատուկ տեսակ է»<sup>2</sup>:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք համարում քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի պատմական զարգացման սկիզբը համարել հանցագործների հանձնման ինստիտուտի ձևավորման ժամանակաշրջանը և հարցի էությունը պարզաբանել այս ինստիտուտի ձևավորման ակունքներից: «Հանձնման ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը անցնում են միջազգային իրավունիք զարգացմանը զուգընթաց և ընդգրկում են պատմական բոլոր ժամանակաշրջանները»<sup>3</sup>: Հանձնման ինստիտուտի զարգացման պատմության մեջ կարելի է առանձնացնել չորս հիմնական փուլեր.

1. հին աշխարհից մինչև 18-րդ դարի սկիզբ,

---

<sup>1</sup> Տե՛ս Талалаев А. Н., Право международных договоров: Действие и применение договоров, М., 1995, էջեր 13-14:

<sup>2</sup> Տե՛ս Бастыркин А.А., Взаимодействие советского уголовно-процессуального и международного права. Л., 1986. էջ 40:

<sup>3</sup> Տե՛ս Валеев Р.М., Выдача преступников в современном международном праве. Казань. Казанский гос. Ун-т, 1976, էջ 10:

2. 18-րդ դարից մինչև 19-րդ դարի 40-ական թվականներ,
3. 19-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի սկիզբ,
4. 20-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը:

Հանցագործների և դատապարտյալների հանձնման ինստիտուտի պատմությունը սկիզբ է առնում պետությունների ձևավորման ժամանակաշրջանից, որի մասին վկայում են մեզ հասած մի շարք փաստաթղթեր: Այս հարցը ուսումնասիրող գիտնականների կողմից այն հիմնականում չի վիճարկվում, սակայն այդ ժամանակաշրջանում իրականացվող հանձնումը շատ պարզունակ բնույթ էր կրում: Հանձնման իրավունքի զարգացման մակարդակը համապատասխանում էր ընդհանուր միջազգային իրավունքի և նրա հիմնարար սկզբունքների զարգացման մակարդակին:

Գիտնականների կողմից հիշատակվող ամենահին աղբյուրներից մեկը, որը կարգավորում էր հանձնմանը վերաբերող հիմնախնդիրներ մ.թ.ա. 1296թ. կնքված պայմանագիրն է Խեթթերի թագավոր Խեթուշիլ 3-րդի և Եգիպտոսի փարավոն Ռամզես 2-րդի միջև: Այդ պայմանագրում ամրագրված է, որ «Եթե ինչ-որ մեկը փախչի Եգիպտոսից և գնա Խեթթերի թագավորություն, ապա Խեթթերի թագավորը չի պահի նրան, այլ կվերադարձնի Ռամզեսին»<sup>1</sup>: Վաղ շրջանում հանձնման ինստիտուտի կիրառման գործընթացն իրականացվում էր իրավաբանական և պաշտոնական բոլոր ձևակարգերի պահպանման և հիմնականում իրականացվում էր պայմանագրերի կամ դաշնագրերի հիման վրա, սակայն կարող էր իրականացվել նաև փոխադարձության կամ բարի կամքի դրսևորմամբ: Հանցագործների հանձնման վերաբերյալ առկա պայմանագրային պարտավորությունները դիտարկվում էին որպես թագավորների միջև բարիդրացիական հարաբերությունների անհրաժեշտ բաղադրիչ: Բացի այդ, վաղ ժամանակաշրջանի միջազգային նորմերը բովանդակային հիմնարար նշանակություն չունեին: Դրանք հիմնականում անհատական էին, երկկողմանի և պաշտպանում էին միայն պայմանավորվող սուբյեկտների շահերը՝ հաճախ չճանաչելով կողմերի իրավահավասարությունը և երբեմն էլ վնաս պատճառելով երրորդ պետություններին: Հանձնման համար, օրինակ, հիմք էր հանդիսանում թշնամական տարածքների, առանձին անձնաց կամ խմբերի միջև առկա ցանկա-

---

<sup>1</sup> Стів Звирбуль В.К., Шупилов В.П., Выдача уголовных преступников. М.: всесоюз. Инс-т по изучению причин и разработке мер предупреждения преступности. , 1974, էջ 12:

ցած վեճը, որը հանգեցնում էր նրանց միջև պատերազմի: Այսպես, օրինակ՝ հրեաները պահանջում էին իրենց հանձնել Գիզա քաղաքի բնակիչներին, ովքեր Իսրայելում կատարելով հանցագործություն (նրանք բռնաբարել և սպանել էին հրեա էֆրայիմի կնոջը) թաքնվել էին Բենիամինի ծնկում, սակայն Բենիամինի ծունկը հրաժարվեց հանձնել նրան, որը հանգեցրեց պատերազմի և նրանց պարտության<sup>1</sup>: Կամ՝ Լուկուլլոսը պատերազմ հայտարարեց Հայաստանի թագավոր Տիգրանին, քանզի վերջինս հրաժարվել էր հանձնել Սիիրդատին<sup>2</sup>: Ըստ եւթյան հին դարերում միջազգային իրավունքի հստակ նորմերի բացակայությունը հանգեցնում էր նրան, որ հանձնումն իրականացվում էր առանձին քաղաքական կամ ընդհանուր քրեական հանցագործների եզակի դեպքերով՝ համաձայն հատուկ պայմանավորվածությունների, իսկ երբեմն էլ՝ բռնի ուժի կիրառմամբ:

Հանձնման ինստիտուտի զարգացմանը զուգահեռ առաջ է գալիս այնպիսի ինստիտուտի իրավական կարգավորման անհրաժեշտությունը, ինչպիսին ապաստանի իրավունքն է: Դեռ հին աշխարհում՝ թե՛ Հռոմում և թե՛ Հին Հունաստանում, փախստական ստրուկների համար ապաստան էին համարվում տարբեր տաճարները: Սակայն այս ինստիտուտն ավելի զարգացավ հատկապես միջին դարերում, երբ քրիստոնեության տարածմանը զուգընթաց արմատավորվեց այն գաղափարը, որ եկեղեցիները, մենաստաններն ու տաճարները սրբազան վայրեր են և ապահովում են այն մարդկանց անվտանգությունը, ում հաջողվել է այնտեղ թաքնվել: Նման անձինք պատիժ կրելու համար չէին կարող հանձնվել կամ բռնի ուժով ձերբակալվել: Սրբազան վայրերը ապաստան էին բոլոր հետապնդվողների՝ այդ թվում նաև հանցագործների համար<sup>3</sup>: Սակայն նրանց իրավական կարգավիճակը հստակեցված չէր: Դա հիմք էր տալիս փախստականներին հանձնելու համար, երբ դա շահավետ էր, և ապաստանի ինստիտուտը շատ հաճախ կիրառվում էր՝ քաղաքական նկատառումներից ելնելով<sup>4</sup>:

Կա ևս մի տեսակետ, ըստ որի՝ հանձնման ինստիտուտը հին

<sup>1</sup> Ст'ю Волженкина В. М., Выдача в российском уголовном процессе. М., Изд-во "Юрлитинформ", 2002, էջ 18:

<sup>2</sup> Ст'ю Волженкина В. М., Նույն տեղում, էջ 18:

<sup>3</sup> Ст'ю Мартенс Ф., Современное международное правоцивилизованных народов. Т.2, СПб. 1905, էջ 430

<sup>4</sup> Ст'ю Галенская Л.Н., Право убежища. Международно-правовые вопросы. М.: Межд. От-ния. 1968, էջ 10:

դարերից մինչև 17-րդ դարի վերջ չի կարելի համարել ո՛չ միջազգային իրավունքի և ո՛չ էլ քրեական դատավարության ինստիտուտ, քանզի հանձնման հետ կապված բոլոր դեպքերը եզակի բնույթ են կրել, կատարվել են քաղաքական նկատառումներով և չեն բխել իրավական օգնության անհրաժեշտությունից<sup>1</sup>: Այս ժամանակաշրջանում կնքված պայմանագրերի համաձայն՝ պետությունները պետք է հանձնեին ոչ թե ընդհանուր քրեական, այլ բացառապես քաղաքական հանցագործներին, հերետիկոսներին. օրինակ՝ Անգլիայի թագավոր Չենրի 2-րդի և Շոտլանդիայի թագավոր Վիլիելմի միջև 1174թ. կնքված տրակտատը, 1303թ. Փարիզի տրակտատը, որը կնքվել էր Անգլիայի և Ֆրանսիայի թագավորների միջև, ըստ որոնց նրանք պարտավորվում էին իրենց մոտ ապաստան չտալ փոխադարձ թշնամիներին և ապաստաններին<sup>2</sup>:

Սակայն հարկ է նշել, որ մենք այնքան էլ համակարծիք չենք այս տեսակետի հետ: Ճիշտ է, միգուցե հանձնման ինստիտուտը այդ ժամանակաշրջանում նման չի եղել ժամանակակից հանձնման ինստիտուտին և նրան ներկայացվող պահանջներին, բայց, այնուամենայնիվ, այդ ժամանակից էլ հենց սկիզբ է առել պետությունների համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում, թեկուզ և դա սկզբնական շրջանում կրել է քաղաքական հանցագործների դեմ պայքարի ձև: Ըստ իս, այնուամենայնիվ, այդ ժամանակաշրջանից է սկսել ձևավորվել իրավական այն բազան, որը հետագայում հիմք դարձավ ավելի համակարգված և արդյունավետ նորմերի մշակման համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանձնման ինստիտուտի հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն է թողել 18-րդ դարի ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որի արդյունքում իրավաբանական ձևակերպում ստացավ ապաստանի իրավունքը: Հենց քաղաքական հանցագործների համար ապաստանի իրավունքի հռչակումը անմիջականորեն ազդեց հանձնման ինստիտուտի վրա, այդ ժամանակ սկսեցին ձևավորվել նորմեր, թե՛ ներպետական օրենսդրության մեջ և թե՛ միջազգային իրավունքում, որոնց համաձայն՝ արգելվում է հանձնել քաղաքական հանցագործներին: Թեև

<sup>1</sup> Տե՛ս Волосюк П.В., Международное сотрудничество в уголовном судопроизводстве: Учебное пособие, -Ставрополь: Изд-во СГУ, 2009, էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս Мартенс Ф., Современное международное право цивилизованных народов. Т.2, СПб. 1905, էջ 428:

հետագայում պետությունները սկսեցին մշակել նորմեր, որոնք սահմանափակում էին այն անձանց շրջանակը, ովքեր կարող էին ապաստանի իրավունք ստանալ: 19-րդ դարի սկզբներին այդ անձնաց շրջանակը սահմանափակվեց միայն այլ պետության տարածքում քաղաքական հանցագործություն կատարած անձանցով, քանի որ պատմական այդ շահանակաշրջանում Եվրոպայից մեծ քանակությամբ մարդիկ տեղափոխվեցին Ամերիկա և այլ մայրցամաքներ, որոնց մեջ քիչ չէին նաև հանցագործները, ովքեր խուսափում էին իրենց հայրենիքում ձերբակալվելուց և պատասխանատվություն կրելուց: Այդ ամենից պետք է եզրակացնել, որ հանցավորության դեմ պայքարի նախկին միջոցները արդյունավետ չէին, ուստի պետությունները սկսեցին կնքել հանձնման մասին երկկողմ և բազմակողմ պայմանագրեր<sup>1</sup>: 19-րդ դարից սկսած՝ հանձնումը ընդհանուր քրեական հանցավորության դեմ պայքարում ձեռք է բերում իրավական օգնության բնույթ: Առաջին բազմակողմ պայմանագիրը Մեծ Բրիտանիայի, Յուլանդիայի, Իսպանիայի և Ֆրանսիայի միջև 1802թ. կնքված Ամիենի պայմանագիրն էր: Հանձնման հետ կապված հարաբերությունները ոչ միայն սկսեցին կարգավորվել միջազգային պայմանագրերով, այլև պետությունները սկսեցին ընդունել օրենքներ, որոնք կարգավորում էին հանցագործների հանձնման հետ կապված խնդիրները: Այսպես, օրինակ՝ նմանատիպ առաջին օրենքներից էր հանձնման մասին 1833թ. Բելգիայում ընդունված օրենքը, որը սահմանում էր այն հանցագործությունները, որոնց կատարման համար պետությունը կարող էր պահանջել հանցագործի հանձնում, ինչպես նաև հանձնման ընթացակարգը սահմանող նորմեր:

Հանցագործների հանձնման ինստիտուտի զարգացման հաջորդ փուլը սկսվել է 19-րդ դարի 40-ական թվականներից և շարունակվել մինչև 20-րդ դարի կեսերը: Ինչպես իրավացիորեն նշում է Ֆ. Մարտենսը, 19-րդ դարի կեսերից քաղաքակիրթ պետությունները ավելի գիտակցեցին քաղաքական հանցագործություններ չկատարած հանցագործների դեմ պայքարում համատեղ հանդես գալու անհրաժեշտությունը, և այդ նպատակով սկսեցին կնքվել հանձնման մասին պայմանագրեր, որոնք պետությունների համար դարձան պարտականություն և միջազգային համագործակցության շրջանում դատա-

---

<sup>1</sup> Ст'ю Валеев Р.М., Выдача преступников в современном международном праве. Казань. Казанский гос. Ун-т, 1976, т. 10:

կան օգնության ակտ<sup>1</sup>:

1880թ. Օքսֆորդի իրավունքի միջազգային ինստիտուտի խորհրդաժողովում մշակվում են 26 պարագրաֆներ, որոնք վերաբերում էին հանցագործների հանձնման հիմնական իրավաբանական սկզբունքներին: Օքսֆորդի բանաձևի համաձայն՝ հանձնումը հռչակվում էր միջազգային իրավական ակտ, որը համապատասխանում էր արդարադատության և պետության շահերին<sup>2</sup>: Հարկ է նշել, որ այս փաստաթուղթը էական ազդեցություն է թողել տարբեր երկրներում հանձնման վերաբերյալ օրենսդրության մշակման և դրա պրակտիկ իրագործման վրա:

Հանձնման վերաբերյալ այդ ժամանակահատվածում եղած մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ այդ ոլորտում պետությունների համագործակցության իրավական կարգավորման վերաբերյալ ձևավորվում են երկու մոտեցումներ: Պետությունների միջև հարաբերություններում առավել տարածված էր այն պրակտիկան, ըստ որի՝ հանցագործին հանձնելու համար հիմք է հանդիսանում միայն պայմանագիրը՝ երկկողմ կամ բազմակողմ, թեև բարի կամքի դրսևորումը նույնպես կիրառվում էր, սակայն որպես երկրորդային հիմք: Պայմանագրի հիման վրա հանձնման իրականացումը կիրառվում էր հատկապես անգլո-սաքսոնական, իսկ առանց պայմանագրի՝ ռոմանագերմանական իրավական համակարգի պետություններում:

Այս ժամանակաշրջանում էլ հենց սկիզբ է դրվում հանցագործների հանձնման ինստիտուտի նոր բնութագրիչ հատկանիշի ձևավորմանը: Այն ոչ միայն ապահովում էր պետությունների համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում, այլ նաև ապահովում էր հանձնվող հանցագործների որոշ իրավունքները: Այսպես, օրինակ՝ այդ ժամանակ է հաստատվում երկակի քրեականության սկզբունքը, ըստ որի՝ այն արարքը, որի համար նախատեսվում է հանձնում, պետք է հանցագործություն համարվի թե՛ հանձնող և թե՛ հանձնում պահանջող պետության օրենսդրությամբ, մասնագիտացվածության կամ կոնկրետության սկզբունքը, որի համաձայն՝ հանձն-

<sup>1</sup> St'u Martens Ф., Современное международное право цивилизованных народов. Т.2, СПб. 1905, тг 434:

<sup>2</sup> St'u Звирбуль В.К., Шупилов В.П., Выдача уголовных преступников. М.: всесоюз. Инс-т по изучению причин и разработке мер предупреждения преступности, 1974, тг 12:



ված անձին կարելի է պատասխանատվության ենթարկել միայն այն հանցագործության համար, որի համար նա հանձնվել է: Այս գծերը հետագայում իրենց զարգացումներն են ունեցել:

Միջազգային հանցագործությունների դեմ համատեղ պայքար իրականացնելը հիմք դարձավ պետությունների համար այդ համագործակցությունը ամրագրելու տարածաշրջանային մի շարք միջազգային պայմանագրերի կնքմամբ, որոնք կարգավորում էին քրեական գործերով իրավական օգնության շրջանակներում պետությունների համագործակցությունը: 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը այս բնագավառում պետությունների համագործակցության բնույթը երկկողմ պայմանագրերից վերափոխվում է բազմակողմ պայմանագրերի: Ճիշտ է, երկկողմ պայմանագրերի կիրառման պրակտիկան ավելի կիրառելի է, քանի որ դրանց վրա կարելի է ավելի վստահ հենվել, երբ բացակայում է միասնական կարգավորումը, և բացի այդ, դրանք ավելի ճկուն են իրենց դրույթներում: Բայց դրանք էլ ունենին իրենց բացասական կողմերը: Պետությունները, կախված պայմանագրերի նախապատրաստման աշխատանքների հետ, մշտապես ներքաշված էին դիվանագիտական բանակցությունների մեջ՝ դրանցում, ըստ ներպետական կամ միջազգային շահերի անհրաժեշտության, փոփոխություններ կատարելու համար: Իսկ հետագայում էլ ներպետական օրենսդիր մարմինները ձեռնամուխ էին լինում այդ պայմանագրերի կնքման և վավերացման գործընթացներին, ըստ անհրաժեշտության, համապատասխան ազգային օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելուն: Ուստի պետությունների համար ավելի ձեռնտու էր միասնական բազմակողմ պայմանագրերի կնքումը: Այսպես, օրինակ՝ 1889թ. Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում կնքվում է բազմակողմ կոնվենցիա Արգենտինայի, Բոլիվիայի, Պարագուայի, Պերուի և Ուրուգվայի միջև միջազգային քրեական իրավունքի մասին, որի 19-43-րդ հոդվածները վերաբերում էին հանցագործների հանձնմանը: Մոնտեվիդեոյի պայմանագրին 1902թ. հետևում է սեկ այլ բազմակողմ պայմանագրի կնքումը այս անգամ արդեն Մեքսիկայում: Դրան մասնակցում էին 17 պետություն: Այս համագործակցությունը միջամերիկյան պետությունների միջև շարունակվում է նաև հետագա տարիներին, որոնց ընթացքում կնքվում են այլ ոլորտներին վերաբերող մի շարք այլ պայմանագրեր:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչև

19-րդ դարի վերջը հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցության ուղղությունները հիմնականում վերաբերում էին հանցագործների հանձնմանը, որի մասին վկայում են այդ ժամանակ կնքված պայմանագրերը: Ավելի ուշ սկսում են կնքվել քննչական և դատական հանձնարարությունների փոխադարձ կատարման, հանցագործությունների մասին տեղեկատվության փոխանակման, հետախուզման և ձերբակալման վերաբերյալ պայմանագրեր: Նման համագործակցությունը ավելի լայն կիրառություն է ստանում 19-րդ դարում: Ելնելով պրակտիկայից բխող անհրաժեշտությունից՝ պայմանագրերը սկսում են կարգավորել նաև քրեական գործերով իրավական օգնության այլ տեսակների իրականացման կարգը, մասնավորապես քննչական հանձնարարություններ ուղարկելու և դրանց իրականացման հետ կապված հիմնախնդիրները: Պայմանագրերում կարգավորման էին ենթարկվում նաև վկաների ներկայանալու, առերեսումներ կատարելու, տեղեկատվության և իրեղեն ապացույցների փոխանցման, ինչպես նաև այլ հարցեր<sup>1</sup>:

1927թ. Վարշավայում տեղի է ունենում Առաջին միջազգային խորհրդաժողովը՝ կապված քրեական իրավունքի ունիֆիկացման հետ: Այդ համաժողովում միջազգային իրավակարգի դեմ ոտնձգող հանցագործությունների շարքին դասվեցին ծովահենությունը, մետաղական փողերի և պետական արժեթղթերի կեղծումը, թմրանյութերի ապօրինի առքուվաճառքը, պոռնոգրաֆիան, ինչպես նաև այլ հանցագործություններ, որոնց համար պատասխանատվություն էր սահմանվում միջազգային կոնվենցիաներով: Այդ հանցագործությունների դեմ պայքարը պահնաջում էր ավելի ուժեղացնել պետությունների համագործակցությունը, այդ թվում նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ հետախուզումը, հանցագործության գործիք հանդիսացող առարկաների բռնագրավումը:

Հանցագործությունների աճը ստիպում է պետություններին փնտրելու համագործակցության նոր ուղիներ, ստեղծելու միջազգային համապատասխան կազմակերպություններ, պարբերաբար հրա-

---

<sup>1</sup> Նման հիմնախնդիրներ կարգավորվել են հատկապես հետևյալ պայմանագրերում՝ Ռուսաստանի և Ավստրիայի միջև 1808թ. հանձնման մասին պայմանագրում, Ռուսաստանի և Պրուսիայի միջև 1885թ. հանձնման մասին պայմանագրում, Ռուսաստանի և Դանիայի միջև 1866թ. հանձնման մասին պայմանագրերում և այլն: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Мартенс Ф., Современное международное право цивилизованных народов. Т.2, СПб. 1905, էջեր 391, 432:

վիրելու միջազգային համաժողովներ, խորհրդաժողովներ, որոնք վերաբերում էին ոչ միայն հանցավորության դեմ պայքարելու խնդիրների քննարկմանը, այլև միջազգային բնույթի կանխարգելման միջոցների համակարգմանը: Առանձին հանցագործությունների դեմ պայքարի սկիզբ կարելի է համարել 1884 թ. մարտի 14-ը, երբ ընդունվում է Կոնվենցիա ստորջրյա մալուխների պահպանության մասին<sup>1</sup>: Այնուհետև ընդունվում են 1910թ. Պոռնոգրաֆիայի տարածման դեմ պայքարի մասին կոնվենցիան (փոփոխված 1949թ. Արձանագրությամբ)<sup>2</sup>, 1926 թ. Ստրկության մասին կոնվենցիան (1953 թ. ղեկտենքերի 7-ի արձանագրությամբ)<sup>3</sup>, 1950 թ. կոնվենցիան մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից մարմնավաճառության նպատակով շահագործելու մասին<sup>4</sup>, 1961 թ. Թմրանյութերի մասին միասնական կոնվենցիան<sup>5</sup>, 1971 թ. Վիեննայի կոնվենցիան հոգեմետ նյութերի մասին<sup>6</sup>, 1988 թ. կոնվենցիան թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին<sup>7</sup>, ահաբեկչության տարբեր դրսևորումների դեմ պայքարի մասին, մասնավորապես՝ Օդանավերի ապօրինի զավթման դեմ պայքարի մասին 1970թ. ղեկտենքերի 16-ի կոնվենցիան, Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց, ինչպես նաև դիվանագիտական գործակալների դեմ հանցագործությունների կանխման և պատժի մասին 1973 թ. ղեկտենքերի 14-ի կոնվենցիան, Պատանդներին առևանգելու դեմ պայքարի մասին 1979 թ. ղեկտենքերի 17-ի միջազգային կոնվենցիան, Ատոմային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին 1980 թ. մարտի 3-ի կոնվենցիան, Տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ 1984 թ. ղեկտենքերի 10-ի կոնվենցիան, Ռուսբային ահաբեկչության դեմ պայքարի մասին 1997 թ. ղեկտենքերի 16-ի կոնվենցիան, Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 1999 թ. ղեկտենքե-

---

<sup>1</sup> Տե՛ս Сборник международных договоров, соглашений и правил по вопросам торгового мореплавания, М., 1959:

<sup>2</sup> Տե՛ս Сборник действующих договоров СССР, Вып. IX, М., 1954:

<sup>3</sup> Տե՛ս Сборник международных договоров, соглашений и конвенций, заключенный СССР с иностранными государствами, Вып. IXI, М., 1960:

<sup>4</sup> Տե՛ս Сборник действующих договоров СССР, Вып. XVI, М., 1957:

<sup>5</sup> Տե՛ս Сборник действующих договоров СССР, Вып. 23, М., 1970:

<sup>6</sup> Տե՛ս Сборник действующих договоров СССР, Вып. 35, М., 1981:

<sup>7</sup> Տե՛ս Международное сотрудничество в борьбе с преступностью (Сб. документов), Сост. П. Н. Бирюков, В. А. Панюшкин, Воронеж, 1997.

րի 9-ի միջազգային կոնվենցիան և բազմաթիվ այլ միջազգային կոնվենցիաներ ու համաձայնագրեր<sup>1</sup>:

Վերը նշված կոնվենցիաները իրենց ուրույն դերն են ունեցել հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության զարգացման գործընթացում, քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ կապերի հաստատման ոլորտում: Դրանք էական ազդեցություն են ունեցել նաև հանցավորության դեմ պայքարում միջազգային և ներպետական օրենսդրության զարգացման վրա, նպաստել են քրեական գործերով պետությունների փոխհամագործակցության կազմակերպման և այլ խնդիրների լուծման համար պետությունների ջանքերի միավորմանը, որի նպատակն է բարձրացնել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը, որը ներառում է այդօրինակ հանցագործությունների կանխարգելումը, բացահայտումը և դրանց պատժողական քաղաքականությունը:

Քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի զարգացման չորրորդ պատմական փուլը սկսվում է 20-րդ դարի կեսերից և շարունակվում մինչ մեր օրերը: Այս ինստիտուտի զարգացման վրա մեծ ազդեցություն է թողել հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ավարտից հետո ստեղծվեցին ռազմական երկու տրիբունալներ, որոնք պատասխանատվության էին ենթարկում միջազգային հանցագործություններ կատարած անձանց: Այս ժամանակաշրջանից սկսած՝ հատկապես հանցագործների հանձնումը էական նշանակություն է ձեռք բերում միջազգային հանցագործություն կատարած անձնաց հետապնդման համար: 1946թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվում է հատուկ բանաձև «Պատերազմական հանցագործություններ կատարած հանցագործներին հանձնելու և պատժելու» մասին, ըստ որի՝ ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները պարտավորվում էին իրենց երկրում այդ հանցագործներին բռնելու դեպքում նրանց պատասխանատվության ենթարկելու համար հանձնել այն երկրներին, որտեղ նրանք կատարել էին այդ հանցագործությունները<sup>2</sup>: Այդ պարտավորության մասին նշված էր նաև Նյուրեմբերգի ռազմական դատարանի կանոնդարության 6-րդ հոդ-

<sup>1</sup> St' u Bussion M. C., International Terrorism, N. Y., 2001:

<sup>2</sup> St' u Резолюции, принятые Генеральной Асамблеей на первой части 1 сессии. Лондон, 1946, էջ 10:

վածում, ինչպես նաև 1947թ. ՄԱԿ-ի «Պատերազմի հանցագործների և դավաճանների հանձնման մասին» բանաձևում<sup>1</sup>:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո աշխարհաքաղաքական քարտեզում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում հանցավորության դեմ պայքարում ավելի ուժեղացան հատկապես տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների դերն ու նշանակությունը: Դրանց կողմից սկսվեցին բազմակող պայմանագրերի մշակման գործընթացներ, որոնք չէին կարող չանդրադառնալ նաև քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի հետագա զարգացումների վրա: Այս բնագավառում հատկապես մեր տարածաշրջանի համար մեծ դերակատարություն է ունեցել Եվրոպայի խորհուրդը, որի շրջանակներում մշակվել և պետությունների դատին են հանձնվել մի շարք փաստաթղթեր, որոնք կարգավորում էին մեր կողմից ուսումնասիրվող բնագավառը: Այդպիսի առաջին կարևոր փաստաթղթերից էր 1957թ. ընդունված Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան, որը միասնական դրույթներ է պարունակում հանցագործների հանձնման հետ կապված հարաբերությունները կարգավորելու համար: Քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի զարգացման գործում հատկապես մեծ նշանակություն ունեցավ 1959թ. Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված «Քրեական գործերով իրավական օգնության մասին» կոնվենցիան: 1983թ. Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունվեց «Դատապարտյալների հանձնման մասին» կոնվենցիան, որը ևս իր ուրույն նշանակությունը ունեցավ այս ոլորտի կարգավորման համար: 1990թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեցին երկու տիպային պայամանագրեր, որոնցից մեկը վերաբերում էր «Հանցագործների հանձնմանը», իսկ մյուսը՝ «Քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալուն»: Այս փաստաթղթերը էական նշանակություն ունեցան ինչպես քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտի զարգացման վրա, այնպես էլ նպաստեցին պետությունների համագործակցության նոր մոտեցումների մշակմանը:

Քրեական գործերով իրավական օգնության հիմնախնդիրները հատկապես մեծ նշանակություն ունեն նաև մեր տարածաշրջանի

---

<sup>1</sup> St'u Официальный отчет Генеральной Ассамблеи, вторая сессия. Резолюции. Нью-Йорк, 1947, էջ 57:

համար: Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությունը և համագործակցությունը քրեական գործերով իրավական օգնության գործընթացներում:

Դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակ ՀԽՍՀ-ն, լինելով ԽՍՀՄ-ի անդամ, գործուն մասնակցություն էր ունենում հանցավորության դեմ պայքարում և ղեկավարվում էր ԽՍՀՄ-ի անունից կնքված պայմանագրերով: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումը հանգեցրեց միասնական իրավական դաշտի փլուզման: Նախկինում «թափանցիկ» սահմանները իրավական մարմինների աշխատակիցների համար դարձան անհաղթահարելի: Մինչդեռ հանցագործությունը ոչ միայն պահպանեց իր միասնական բնույթը, այլև դարձավ կազմակերպված, հասարակության համար շատ ավելի վտանգավոր, քանի որ կարող է բացասական ազդեցություն ունենալ հասարակության ժողովրդավարացման և բարեփոխումների վրա, խաթարել տնտեսությունը, նպաստել քրեական տարրերի գործունեության ակցտիվացմանը: Բնականաբար, նման իրավիճակում հայտնվեցին նաև քրեական գործերը քննող իրավապահ մարմինները՝ առաջին անգամ բախվելով այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք էին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալը, հանցագործություն կատարած անձանց հանձնումը և այլն:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունը ձեռք է բերում անկախություն և ձեռնամուխ լինում նոր պայմանգրային-իրավական բազայի ձևավորմանը: Չլինելով ԽՍՀՄ-ի իրավահաջորդը միջազգային պայմանագրերի նկատմամբ՝ ՀՀ-ն պետք է ինքնուրույն ձևավորեր պետության գործունեության գրեթե բոլոր ոլորտները ընդգրկող իր պայմանագրային դաշտը: Այն իրականացվում էր՝ երկկողմ և բազմակողմ պայմանագրեր կնքելով, արդեն իսկ գործող ունիվերսալ և տարածաշրջանային պայմանագրերին միանալով, միջազգային կառույցներին անդամագրվելով և այլն: Բնականաբար այս գործընթացը վերաբերում էր նաև քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտին: Կարծում ենք, որ նշված ոլորտում ՀՀ համագործակցության վերաբերյալ հարցերի լուսաբանման և կանոնակարգման համար պետք է անդրադառնալ հատկապես տարածաշրջանային պայմանագրերին, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպիսի ուղի է անցել մեր հանրապետությունը որպես ի-

րավական պետություն կայանալու և միջազգային-իրավական գործընթացներին ինտեգրվելու ճանապարհին: Այն սկսվեց ԱՊՀ պայմանագրերին անդամակցելով, որոնք նպատակ ունեին նախ և առաջ ԽՍՀՄ նախկին հանրապետությունների միջև այս բնագավառում ստեղծել հանցավորության դեմ պայքարի միասնական իրավական դաշտ: Եվ այսպես, 1993թ. դառնալով ԱՊՀ անդամ, Հայաստանի Հանրապետությունը կնքում է 1993թ. ԱՊՀ շրջանակներում քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Մինսկի կոնվենցիան: Այս կոնվենցիան կիրառության մեջ է մտնում, և ԱՊՀ երկրները բավականին ակտիվ գործունեություն են ծավալում նրա շրջանակներում քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելիս, սակայն այն զերծ չէր բացթողումներից, թերություններից, որոնք խոչընդոտում էին պետություններին ավելի պատշաճ մակարդակի հասցնելու համագործակցությունը միմյանց հետ (մասնավորապես խնդիրներ էին առաջանում միջնորդությունների ոչ հաստակ ձևակերպումների, ներկայացվող պահանջների անհստակության հետ կապված և այլն), ուստի 2002թ. Քիչնևում կնքվում է մի նոր պայմանագիր: Վերջինս կոչված էր լրացնելու և ուղղելու այն բացթողումները, որոնք տեղ էին գտել 1993թ. պայմանագրում: Այն՝ որպես պատմա-իրավական փաստաթուղթ, այնուամենայնիվ, ունեցավ իր նշանակությունը, քանզի առաջին փորձն էր հետխորհրդային ժամանակաշրջանում քիչ թե շատ կանոնակարգելու այդ գործընթացները, փոխօգնության հնարավորություն ստեղծելու և, որ ամենակարևորն է, վերահսկելու այդ ամենը: Հայաստանի Հանրապետությունը նույնպես կնքել է այս կոնվենցիան, որը մեր պետության համար ուժի մեջ է մտել 2005թ. փետրվարի 19-ից:

Հաջորդ քայլը Եվրոպայի խորհրդին անդամակցելն էր, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը միացավ արդեն իսկ գործող երկու կարևոր փաստաթղթերի՝ 1959թ. Քրեական գործերով իրավական օգնության մասին Եվրոպական կոնվենցիային և 1957թ. Հանցագործների հանձնման մասին Եվրոպական կոնվենցիային և նրա երկու լրացուցիչ արձանագրություններին միանալն էր

(ՀՀ-ն համար դրանք ուժի մեջ են մտել 2004թ.-ից)<sup>1</sup>: Այս փաստաթղթերին միանալով՝ Հայաստանի Հանրապետությունը ընդլայնեց իր համագործակցության դաշտը քրեական գործերով իրավական օգնության ոլորտում:

Հայաստանի Հանրապետության պայմանագրային պրակտիկան հարուստ է նաև երկկողմ պահանջագրերով, որոնք վերաբերում են քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտին, կան առանձին պայմանագրեր, որոնք վրաբերում են հանձնման ինստիտուտին: Չցանկանալով թվարկել դրանց շարքը՝ ուզում ենք նշել, որ դրանք անցնում են ավելի քան երկու տասնայակը (ընդ որում դրանց մեջ ներառվում են թե՛ միջպետական, թե՛ միջկառավարական և թե՛ միջգերատեսչական պայմանագրերը): Պայմանագրային դաշտի ձևավորումը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետության կողմից այս բնագավառում իր օրենսդրական դաշտը ձևավորելու համար, քանզի քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ դրույթները, որոնք տեղ են գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, պարբերաբար ենթարկվում են փոփոխությունների, որոնց արդյունքում մենք ունենք միջազգային պահանջներին համապատասխանող իրավական նորմեր:

Այսինքն՝ պետք է փաստել, որ 1990-ական թվականներից հետո պետությունների համագործակցությունը այս ուղղությամբ ընթանում է հետևյալ երկու ուղղություններով՝

1. արդեն իսկ ձևավորված իրավական ինստիտուտների կարգավորման բարելավում թե՛ միջպետական և թե՛ ներպետական մակարդակներում,

2. ներպետական օրենսդրության մեջ քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ միջազգային համագործակցության վերաբերյալ իրավական բազայի ձևավորում:

Հարկ է նշել, որ հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցության նոր ընթացակարգերի ի հայտ գալը վկայում է, որ այսօր արդեն ռեալ իրականություն դարձած նոր հազարամյակը՝ 21-րդ դարը, թելադրում է նոր մոտեցումներ ու օրինաչափություններ: Հանընդիանուր գլոբալիզացումը բնականաբար,

---

<sup>1</sup> Стѝи Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью, Сост. Москалькова Т. Н. и др., М., 1998:



ամռնչվում է նաև այնպիսի մի բնագավառի, ինչպիսին միջազգային չափանիշների մակարդակով քրեական գործերով իրավական օգնության խնդիրն է: Քաղաքական, հասարակական, տնտեսական մեծ տեղաշարժերը առավել քան երբևէ պահանջում են պետությունների համագործակցություն՝ հանուն աշխարհի խաղաղության, մարդու իրավունքների պաշտպանության, հանցավորության կանխարգելման:

**Lianna Sargsyan**

*Lecturer of the YSU Chair of European and International Law*

## **HISTORICAL-LEGAL EVOLUTION OF THE INSTITUTE OF LEGAL ASSISTANCE IN CRIMINAL CASES**

The article dedicated to the formation and development of the Institute of the mutual assistance in criminal cases. The main goal of the article is to analyze the historical background of the evolution of the Institute of the mutual assistance in criminal cases. The Institute of the mutual assistance in criminal cases has significantly changed during the history of the International Law. The article presents the changes that the Institute of the mutual assistance in criminal cases has undergone during the whole historical period beginning from the ancient times to our days.

The article also presents the role of this Institute for the Republic of Armenia and the steps undertaken by the RA for the development of the Institute of the mutual assistance in criminal cases in our legislation.